Հետազոտական աշխատանք

Թեմա՝	Ազգային տոների, ծեսերի կազմակերման առանձնահատկությունները կրթության գործընթացում:
Հեղինակ՝	Գայանե Ղարագյոզյան
Պաշտոն՝	Դաստիարակ
Հաստատություն՝	«Երևանի Հ. 137 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ

Երևան 2022

Ներածություն

Ազգի գոյապահպանման առաջին հիմնապայմանը հայրենիքի, ազգային մշակույթի համակարգի առկայությունն է: Ազգային մշակույթն ազգային դաստիարակության հիմնական լծակն է: Առանց ազգի հայրենիք չկա, առանձ հայրենիքի ազգ: Հայերնիքի բովանդակությունը հողն է, ձևը՝ ազգային մշակույթը: Առանց ազգային մշակույթի ազգային Հայրենիք չկա:

Հայ ժողովուրդը դարերի ընթացքում ձեռք է բերել իր ինքնությունը, ազգային դիմագիծը, բնավորությունը, մշակույթը:

Հայկական մշակույթը հայ ազգի կենսագործունեության տարատեսակ դրսևորումներն են՝ հիմնված ինքնաճանաչման, ինքնաարտահայտման և հմտությունների ու կարողությունների կուտակման վրա: Այն հավաքածուն է խորհրդանիշների, հավատալիքների արժեքների, որոնք բնութագրում են ազգի կյանքը: Իր բնույթով հայկական ազգային մշակույթը էթնիկական մշակույթի զարգացման բարձրագույն ձևն է, և հայ ազգային մշակույթը միշտ կապված ՝ սոցիալական, իր անմիջական կրողի՝ հայ ժողովրդի հետ:

1.1 Հայոց ազգային տոները տարբեր ժամանակներում տարբեր դրսևորումներ և վերաիմաստավորումներ են ունեցել: Սակայն այս տեների արմատներն այնքան խորն են եղել ժողովրդի ինքնագիտակցության մեջ, որ ժամանակի կրոնաքաղաքական փոփոխությունը նույնպես չի կարողացել ազդել դրանց վրա:

Հայկական մշակույթը հնուց ի վեր, մինչև օրս էլ, աչքի է ընկնում իր բազմաթիվ և յուրօրինակ ազգային տոներով: Մենք բոլորս այս տոները նշում ենք, որպես քրիստոնեական և եկեղեցական տոներ, սակայն այս տոների մեծ մասը գալիս է դեռևս նախաքրիստոնեական ժամանակներից: Առանցնացնենք մի քանի ազգային տոներ, որոնք երկար ճանապարհ են անցել, հեթանոսությունից մինչև քրիստոնեություն:

1.2 Ամբողջ քրիսոնյա աշխարհում Զատիկը համարվում է Քրիստոսի հարության տոնը: Սակայն հայոց աշխարհում զատկի տոնի ամրատները շատ ավելի հին են: Զատիկը հնում համարվում էի գարնանացանի տոնը և նվիրված էր Անահիտ դիցուհուն, ով էլ հովանավորում էի մայր հողի բեղմնավորումը: Անահիտը գալով Արարատ, հավաքում է գույնզգույն ձվերը և շաղ տալիս ողջ դաշտով մեկ, իսկ այնուհետև պատվիրում է հավքին բույն դնել Արարատ լեռան վրա և մշտապես գույներ տարածել երկրի վրա: Այդ օրվանից մարդիկ սկսում են ուրախ վարել և ցանել հողը, իսկ մանուկներն ու մեծահասակները մինչև ուշ երեկո երգում, պարում և ձվախաղ են խաղում. «Զատկեզատիկ է, Նավակատիկ է, չամչեհատիկ է»:

- Կարմիր ձու տուր, կարմիր օր տամ:

- Զատիկ, զատիկ, նավակատիկ, արի նստի մեր տան մոտիկ:

Այս տոների ժամանակ զարգանում է, երեխաների մոտ ստեղծագործելու ցանկությունը՝ պատրաստում են գունավոր ձվիկներ ապլիկացիայի ժամանակ, ճուտիկներ, ներկում են: Հնարավորություն ենք տալիս երեխաներին պատմելու իր աշխատանքի մասին, արտահայտել զգացմունքները: Նաև զարգանու, կատարելագործվում է երեխայի բանավոր խոսքը: Առաջարկվում են նաև հանելուկներ, զարգանում է երեխաների մոտ մտածողությունը, հիշողությունը.

«Կարաս ունեմ մի պուճուր մեջը՝ տարբեր գույնի ջուր»:

Կրթության գործում զարգանում են նաև մաթեմատիկական գիտելիքները՝.

- Դեղին սպիտակ գույնի են

Ո՞վ կասի քանի գույնի են:

1.3 Վարդավառը քրիստոնյա աշխարհում տարածված է, որպես Քրիստոսի պայծառակերպության օրը: Տոնի ժամանակ ժողովրդական սովորույթներից է միմյանց վրա ջուր ցողելն ու աղավնիներ բաց թողնելը, որոնք խորհրդանշում են ջրհեղեղը, Նոյի ընտանիքի փրկությունը և Նոյի աղավնուն: Հայերի մեջ տարածված են ջրի և

անձրևաբերության հետ կապված բազմաթիվ ծեսեր: Ձուրն ասոցվացվել է նաև կապույտ գույնի հետ, որը և պարզության, և մաքրություն է խորհրդանշում:

Վարդավառը համարվում է նաև խնձորի տոնը: Ընդունված է սովորություն կար, որ մինչև Վարդավառը խնձոր չէին ուտում, և այդ օրը, երբ խնձորի բերքը օրհնվում էի, նոր բերքը հավաքում էի և օգտագործում:

Ազգային այս տոների, միջոցառումների ժամանակ երեխաները սովորում են շատ ուրախ կատակ երգեր, որոնք ուղեկցվում են ազգային պարերով, խաղիկներով:

Ձրույցների, պարապմունքներ ժամանակ երեխաները ծանոթացան նաև պարատեսակների հետ: Կարողացան պատմել խմբապարերից Ձյովընդ պարատեսակի մասին դա խմբապարերի ընդհանուր անվանումն է: Երեխաները իրենք ինքնուրույն միջոցառման ժամանակ հյուրերին ներկայացրեցին պատմությունը, որ պարողները դասավորվում են կողք-կողքի, շարժվում են շատ դանդաղ, այդ պատճառով էլ հաճախ պարը անվանում են «Ծանդր»: Հնում այդ պարերին մասնակցում էի միանգամից մի քանի հարյուր մարդ, այն խորհրդանշում էր հավերժություն, անվերջություն: Այսպիսով, ծխական պարերը կոչվում էին գյովընդներմ:

1.4. Հայերի մեջ տարածված էր ծիսական տիկնիկներ պատրաստելու ավանդույթները, այս տիկնիկները կանգնեցնում էին այգիների, պարտեզների մեջ, որպեսզի վախեցնեին կենդանիներին, թռչուններին բերքը չվնասելու համար; Կանայք, աղջիկները նստում էին շրջանաձև, երգում էին մեղմ, քնքուշ երգեր և գործում էին, պատրաստում տիկնիկներ:

Մեծ նշանակություն ունեն մանկապարտեզի և ընտանիքի համագործակցությունը ծեսերի, տոների ժամանակ, քանի որ ներգրավվում է նաև ընտանիքը: Քննարկվում է ծեսի համար անհրաժեշտ պարագաներ, հագուստներ, ծաղկեպսակներ:Համբարձման ծեսի անցկացման ժամանակ պատրաստել եմ «Ծաղկամայր» (ծիսական տիկնիկ), սովորել ենք համապատասխան երգեր:

Ծիսական տիկնիկներից են նաև Նուրին կամ անձրևի հարսը, Պուպլատիկինը: Նուրին համարվում էր Ծաղկազարդի խորհրդանիշ տիկնիկը,որից երաշտի ժամանակ գյուղացիները անձրև էին խնդրում, երբ ջուր քիչ էր, հողը չորանում էր և ճաքճքում: Երբ Նուրին արտասվում էր, նրա արցունքներից հողը թրչվում էր, իսկ արտերը և դաշտերը կենդանություն առնում: Այս պարապմունքների ցերեկույթների ընթացքում զարգանում է երեխաներիխոսքը, միմիյաց հետ շփվելու երկխոսություն կատարելու հնարավորություն, բառերը հստակ, ճիշտ արտահայտելու:

Օրինակ.՝

Նուրին, Նուրին եկել է.
Շալե շապիկ հագել է,
կարմիր գոտին կապել է,
Երկնքեն թոն կուզե,
Գետնենեն ծիլ կուզե:
Հարց – Նուրի, Նուրի ի՞նչ կուզես.
Պատասխան – Ամբերեն աստղեր կուզեմ
Արևից էլ շող կուզեմ:

Հնում նաև արևին են գովերգել, նրանից լույս և ջերմություն են խնդրել:

Սովորել ենք քառատողեր.

- Արև, արև արի դուրս
Քեզ բերել ենք աչքի լույս
Քո քույրիկը լուսինկան
Բերեց չամիչ մեկ ման:

Ա՜յ, արևը, արևը
Ում տամ տանի բարևը,
Արևն ելավ էն սարեն
Այ արևը, արևը,
Կաքավ կանչեց էն քարեն,
Ում տամ՝ տանի բարևը:

Երեխաներըլսում են միմյանց, շարունակում ընկերոջ տրված հարցի պատասխանը երգերի միջոցով:

Ծաղկազարդը դեռևս հեթանոսական ժամանակներից են մարդիկ տոնել, որը նվիրված է եղել ծառի պաշտամունքին: Այն հնում կապված է եղել բնության զարթոնքին, գարնան գալստյան հետ:

Ծառզարդարի տոնի ժամանա խորհրդանշական ծառը զարդարել են գույնզգույն շորի պատառիկներով:

Շատ տոներ և ծեսեր փոխել են իրենց անվանումը ու խորհուրդը, բայց դրանցում գոյություն ունեցող մի շարք սովորություններ մինչև օրս էլ պահպանել են իրենց արժեքները:Սակայն ինչպես անցյալում. այնպես էլ այժմ, տոներն ունեն նույն գործառույթը՝ այն է , համախմբել մարդկանց տոնի և ծեսի ազգային գաղափարի շուրջը:

1.5 Ազգային տոներից և ծեսերից գիտելիքներ ստանալու հետ միասին նաև երեխաների մոտ ձևավորվում է աշխատանքային դաստիրակությունը:

Պատրաստել ենք թելերից տիկնիկներ , աշխատել ենք խոհանոցում՝ խմորից պատրաստել ենք և ստացել տիկնիկներ՝ Ասիլիկ և Վասիլիկ, որոնք հիմնականում թխվում էին ամանորի նախօրյակին:

Խմորի վրա ձու էին քսում, զարդարում չամիչով և ընկույզով, դնում վառարանի մեջ, տալիս էին մարդու կերպարանք: Բոլոր տիկնիկները հայկական ավանդական տոների և ծեսերի կարևոր մասն են կազմել, որոնցից յուրաքանչյուրը ունեցել է իր պատմությունը:

Բարեկենդանի տոնի խորհրդանիշներն էին հանդիսանում Ուտիս տատն ու Պաս պապը: Այս երկու կերպարները մշտական պայքարի մեջ էին գտնվում: Զրույցների ժամանակ պարզ գիտակցում էին երեխաները, որ շատ ուտել , գիրանալն չի կարելի, ինչպես Ուտիս տատն էր ցանկանում: Նրան տոնի վերջում գլորում են սարից ներքև և դիմավորում են Պաս պապին՝ Ակլատիզին:

Պապիին դարձյալ երեխաների հետ միասին պատրաստել ենք, շատ մեծ զվարճանք, ուրախություն առաջացրեց երեխաների մոտ: Փայտից ենք պատրաստել, ոտքերից ամրացել ենք սոխ, որը վերածնության ու հարստության խորհրդանիշ էի, ուներ 7 փետուր ամրացված սոխին, որոնցից երեքը սպիտակ էին լինում մեկը՝ սև ու սպիտակ, իսկ մյուս երեքը՝ սև: սպիտակ փետուրները խորհրդանշում էին ձմռան շրջանը, երբ հողը ձյունով էի պատված, իսկ մյուս երեքը սև փետուրները՝ այն շրջանը, երբ ձյունն արդեն հալվում էի և երևում էր սև հողը:

Երեխաները մեծ ոգևորությամբ ուղարկում են տատին, դիմավորում պապին, ասելով.

- Տատը գնաց շերեփն ձեռքին.

Պապը եկավ չոմբախն ուսին.

Ակլատի՛զ, չքանը վիզ

Եկավ մեզ հյուր, կախված երդիս:

Ծեսը խաղարկվում է ոչ թե մեկ տարիայի խմբում այլ տառապանքի խմբերում, բոլոր աշխատողների, ծնողների հետ միասին: Մեծերը ստեղծում են ծիսական միջավայր, ծիսական պարագաներով, կերպարներով, գործողություններով, կերակրատեսակներով, տարվա եղանակին բնորոշ մրգերով: Այդ միջավայրում երեխան ունի իր տեղն ու դերը, որտեղ նա խաղում է և՝ ծիսական և՝ մանկական խաղեր, օգտագործվում են տվյալ ծեսին բնորոշ պարագաներ, ինչպես օրինակ Ամանորին՝ ընկույզ, Զատիկին՝ ձու, համբարձմանը՝ ծաղիկ: Այսինքն մանկանը ծեսի մեջ ներառելու լավագույն միջոցը խաղն է: Ամեն տարիք իր չափով է ներառված այդ գործընթացին, խաղում իր տարիքային բնորոշ հնտությամբ: Զարգանում է իրավիճակը ըմբռնելու կարողությունը, մտքի ճկունությունը, երևակայությունը, հիշողությունը, ուշադրությունը, շարժումներին տիրապելու կարողությունը:

Եզրակացություն

Բոլոր ազգային տոների,ծեսերի վերլուծական ընդհանուր քննություն ամփոփելով, եկանք այն եզրակացության, որ երեխայի զարգացման ոլորտում կարևոր է աանձնացել նրա խոսքը և ստեղծագործական երևակայությունը: Երեխան բաց աչքերով նայում է հրաշք աշխարհին, և թե ինչ կլսի ու կտեսնի, կաղված է մեզանից: Երեխայի բաց հոգու աչքերի մեջ ամենակարևորը առաջին տպավորությունն է, և դա հետագայում սնում է նրա սրիտն ու հոգին, թևավորում նրա երևակայությունը, ուրեմն նախ և առաջ նրան պետք է մատուցել ամենալավը և փորձվածը, ամենալավ երգերն ու պարերը, ամենալավ խաղերն ու գույնները: Եվ երեխայի հայեցի դաստիրակությունը պետք է լինի ոչ թե սոսք խոսք, այլ՝ երևույթ, որից ծնվում են հայրենասիրությունն ու մարդասիրությունը, ազգասիրություն և մեր մշակույթը:

Նաև, մանկապարտեզում կատարվող այս աշխատանքները, ցերեկույթները նպաստում են

Երեխայի բառապաշարի հարստացմանը

Ստեղծագործական երևակայության զարգացմանը

Ինքնուրույն աշխատելու ունակության ձևավորմանը

Բավարարվում է նրա ինքնահաստատման, ինքնադրսևորման պահանջը:

Ձեռք է բերվում խմբով աշխատելու ինքնակազմակերպման հմտություններ:

Զարգանում է գեղարվեստական ճաշակը (նկարչություն, ձեռարվեստ, երաժշտություն):

Առաջարկություններ

Առաջարկվեց նմանատիպ մոջոցառումների անցկացման համար ձեռք բերել զննական, մ
եթոդական նյութեր, տեսահոլովակներ և՛ Երևանում, և՛ հարակից շրջաններում անձկաց
վողազգային ծեսերի և տոների, ծանոթացնել երեխաներին հագուստ՛ տարազներին, ազգ
այիննախշերին:

Օգտագործված գրականություն ցանկ

Հայոց ազգային գաղափարախոսության, ազգային-պատմական-հենքը. Լենդրուշ Խուրշուդյան

Հր. Խառատյան- Ազգային ծեսեր, տոներ.

www.armgeo.am

info@armgeo.am